# ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆՄԱՐԶ
# ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտն մարզ գ.Արևուտ 9-րդ փ. 1
Հեռ.+(37494)97-97-24
Էլ. հասցե arevut10@mail.ru

*Որոշում 27*

*12 ապրիլի 2022թվական*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ <<ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 5ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՕՎՔ-Ի ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ>> ԵՎ <<ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ JCP ՏՐԱԿՏՈՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄՈՎ>>ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով,հիմք ընդունելով Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Լրացուցիչ Ֆինանսավորման Ծրագրի առաջին բաղադրիչի միկրոծրագրի ընտրության ընդհանուր ժողովի հավելված 8-ի և Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրի երկրորդ բաղադրիչի ենթածրագրերի գաղափարների ընտրության ժողովի հավելված 26-ի արձանագրությունները, և Արևուտ համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին *որոշում է.*

1.Հավանություն տալ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ ներկայացվող <<Արևուտ համայնքի 5 բնակավայրերի օրվա կարգավորիչջրամբարի կառուցում և վերանորոգում>> և <<կոմունալ ծառայությունների բարելավում JCP տրակտորի ձեռք բերումով>> ծրագրերի հայտերին:

2.Ծրագրերը Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից հավանության արժանանալու դեպքում թույլատրել Արևուտ համայնքի ղեկավարին <<Արևուտ համայնքի 5 բնակավայրերի ՕՋՎ-ի կառուցում և վերանորոգում>> ծրագրի 4տոկոս համաֆինանսավորում և <<Կոմունալ ծառայությունների բարելավում JCP տրակտորի ձեռք բերումով>> ծրագրի 5 տոկոս համաֆինանսավորում:

1. ԱԼՈՅԱՆ ՀԱՍԱՆ
2. ԱԼՈՅԱՆ ԹԵՆԳԻԶ
3. ԲԱՔՈՅԱՆ ԶԱԴԱ
4. ՕՍԵՅԱՆ ՏԻՏԱԼ
5. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

*ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԷԴԻԿ ՕՍԵՅԱՆ*